ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
29 նոյեմբերի 2019 թ., ԿԽ-010/19/1

Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման, դատավորների հատուկ ուսուցման, դատական ծառայողների վերապատրաստման, դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման 2020 թվականի ուսուցման ծրագրերը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և 8-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդը

Որոշում է հաստատել՝

1. Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման 2020 թվականի ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Դատավորների հատուկ ուսուցման 2020 թվականի ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Դատական ծառայողների վերապատրաստման 2020 թվականի ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման 2020 թվականի ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելված 4-ի:

Խորհրդի նիստը նախագահող՝ Ե. Խունդկարյան

Խորհրդի անդամներ՝ Հ. Ասատրյան

Հ. Բեդևյան

Հավելված 1
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2019 թվականի
նոյեմբերի 29-ի թիվ ԿԽ-010/19/1 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիրներ) 2020 թվականի վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի դրույթների հիման վրա: Ծրագիրը մշակելիս հիմք է ընդունվել ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի 31.07.2019 թ. թիվ 13/19-Ու որոշումը:

3. Ծրագրի նպատակն է ապահովել Ունկնդիրների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական զարգացումն ու կատարելագործումը հետևյալ հիմնական ոլորտներում՝

1) **Ընդհանուր եվ հարակից մասնագիտական ոլորտ:** Վերապատրաստման գործընթացը վերաբերում է իրավաբանական գրի և մեկնաբանման, դատավորի էթիկայի, վարքագծի կանոնների և գործունեության գնահատման, հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հիմնահարցերի, ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումների, հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցերի, դատական իշխանության անկախության և թափանցիկության, Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտներում Ունկնդիրների գիտելիքների շարունակական զարգացմանն ու կատարելագործմանը:

2) **Հատուկ մասնագիտական ոլորտ.**

- **Քաղաքացիական իրավունք և դատավարություն:** Քաղաքացիական իրավունքի և դատավարության շրջանակներում իրականացվող վերապատրաստումը նպատակ է հետապնդում կատարելագործել և զարգացնել Ունկնդիրների հմտությունները և կարողությունները քաղաքացիական դատավարության, ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների, ոչ նյութական վնասի հատուցման, հաշտարարության ինստիտուտի հիմնահարցերի, պարտավորական հարաբերությունների, կորպորատիվ և աշխատանքային իրավունքների, իրավական օգնության, օտարերկրյա դատական ակտերի և արբիտրաժի վճիռների ճանաչման ու հարկադիր կատարման վերաբերյալ դիմումներով գործերի վարույթի, հատուկ հայցային վարույթի և հատուկ վարույթի կարգով գործերի քննության առանձնահատկությունների և արդի այլ հարցերի առանցքային հիմնախնդիրների շուրջ:

- **Սնանկության իրավական կարգավորման և վարույթի արդի հարցեր:** Սնանկության իրավական կարգավորման և վարույթի շրջանակներում իրականացվող վերապատրաստումը նպատակ է հետապնդում կատարելագործել և զարգացնել Ունկնդիրների հմտությունները և կարողությունները սնանկության վարույթի արդի հարցերի, օրենսդրական կարգավորման առանձնահատկությունների, քաղաքացիական դատավարության, պարտավորական հարաբերությունների, կորպորատիվ և բանկային իրավունքների, ֆինանսական կառավարման առանձնահատկությունների և արդի այլ հիմնախնդիրների շուրջ:
- **Վարչական իրավունք և դատավարություն:** Վարչական իրավունքի և դատավարության շրջանակներում իրականացվող վերապատրաստումը նպատակ է հետապնդում կատարելագործել և զարգացնել Ունկնդիրների հմտությունները և կարողությունները ՀՀ վարչական իրավունքի և վարչական դատավարության, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի և հատուկ վարույթի այլ գործերի առանձնահատկությունների, վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների, էկոլոգիական իրավունքի, ինչպես նաև առանցքային նշանակություն ունեցող արդի այլ հարցերի հիմնախնդիրների շուրջ:
- **Քրեական իրավունք և դատավարություն:** Վերապատրաստման գործընթացը վերաբերում է քրեական իրավունքում և դատավարությունում առկա խնդիրներին: Մասնավորապես, վերապատրաստման արդյունքում կատարելագործվում են Ունկնդիրների գիտելիքները և հմտությունները ՀՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության, խոշտանգումների քրեաիրավական բնութագրի և քննության առանձնահատկությունների, պատժի նշանակման կանոնների, քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների, իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրների, կոռուպցիոն դեպքերի, պաշտոնական կոռուպցիայի դեպքերի, ներքին ուսումնասիրությունների, գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների, մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության, կալանքի և այլ խափանման միջոցների, անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանության, կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործությունների և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, քրեական դատավարությունում զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունների, հարցաքննության մեթոդների և հաղորդակցության կառավարման, երեխաների նկատմամբ բռնության բնութագրի և քննության առանձնահատկությունների, քրեական դատավարությունում էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրների և արդի այլ հարցերի ոլորտներում:

3) **Հեռավար ուսուցման ձևով դասավանդվող դասընթացներ:** Վերապատրաստման գործընթացը վերաբերում է հասարակագիտական ուղղվածության գիտելիքների և հմտությունների ձևավորմանն ու կատարելագործմանը: Մասնավորապես, վերապատրաստման արդյունքում Ունկընդիրները կընդլայնեն իրենց գիտելիքները և հմտությունները կառավարման հմտությունների և ներազդման հոգեբանության, փաստարկման և հռետորաբանության, ինչպես նաև փախստականների իրավունքների *(նախատեսված է միայն վարչաիրավական և քրեաիրավական մասնագիտացմամբ դատավորների համար),* քրեական վարույթի ընթացքում անչափահասների իրավունքների պաշտպանության *(նախատեսված է միայն քրեաիրավական մասնագիտացմամբ դատավորների համար)* ոլորտներում:

4. Ուսումնառության ժամաքանակը յուրաքանչյուր դատավորի համար սահմանվում է 80 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է երկու փուլով, յուրաքանչյուրը՝ 40 ակադեմիական ժամ:

5. Դատավորների վերապատրաստումն իրականացվում է ընդհանուր և հարակից, հատուկ մասնագիտական ու հեռավար ուսուցման ձևով դասավանդվող դասընթացների մոդուլների հիման վրա: Յուրաքանչյուր դատավոր, իր մասնագիտացմանը (քաղաքացիաիրավական, քրեաիրավական, վարչաիրավական, սնանկության) համապատասխան, վերապատրաստվում է 40 ակադեմիական ժամ՝ հատուկ մասնագիտական դասընթացների շրջանակներում, և 40 ակա-

դեմիական ժամ՝ ընդհանուր և հարակից մասնագիտական կամ հեռավար ուսուցման ձևով դասավանդվող դասընթացների շրջանակներում:
6. Ծրագիրն իրականացվում է առկա և հեռավար ուսուցման ձևով:
7. Դատավորը չի կարող ընտրել իր մասնագիտացումից տարբերվող հատուկ մասնագիտական դասընթացների որևէ այլ մոդուլում ընդգրկված դասընթաց:
8. Առկա ուսուցման ձևով դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ընտրությունը դատավորի կողմից կատարվում է ըստ սույն հավելվածում ներկայացված փաթեթների:
9. Ուսումնառությունը սկսվում է դատավորների կողմից ընտրված առարկայական կուրսերի ցուցակն Ակադեմիա ներկայացնելուց հետո:
10. Առկա ուսուցման ձևով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվում 2020 թ. ապրիլ-մայիս ամիսները՝ ընդհանուր մասնագիտական, և սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները՝ հատուկ մասնագիտական առարկաներով, իսկ հեռավար ուսուցման ձևով՝ 2020 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-J-005-20	Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում	10
2.	J-J-014-20	Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր	8
3.	J-J-017-20	Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր	10
4.	J-J-020-20	ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները	4
5.	J-J-021-20	Դատական ակտերի մշակման հմտություններ	8
6.	J-J-030-20	Դատական իշխանության անկախություն և թափանցիկություն	8
7.	J-J-031-20	Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար	8
8.	J-J-073-20	Ներքին ուսումնասիրություններ (քննություն)	6

2. Սնանկության մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
9.	J-S-001-20	Սնանկության վարույթի արդի հարցեր	8
10.	J-S-002-20	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	10
11.	J-S-003-20	Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր	6
12.	J-S-004-20	Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր	6
13.	J-S-005-20	Բանկային իրավունքի արդի հարցեր	6
14.	J-S-006-20	Ֆինանսական կառավարում	4

3. Քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
15.	J-C-001-20	Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր	6
16.	J-C-003-20	Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր	6
17.	J-C-008-20	Աշխատանքային իրավունքի արդի հարցեր	10
18.	J-C-015-20	Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	4
19.	J-C-022-20	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	10
20.	J-C-023-20	Ոչ նյութական վնասի հատուցման հիմնախնդիրներ	10
21.	J-C-028-20	ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քաղաքացիական գործերով	8
22.	J-C-029-20	ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հարցեր	10
23.	J-C-031-20	Իրավական օգնություն, օտարերկրյա դատական ակտերի և արբիտրաժի վճիռների ճանաչման ու հարկադիր կատարման վերաբերյալ դիմումներով գործերի վարույթ	4
24.	J-C-032-20	Հատուկ հայցային վարույթի և հատուկ վարույթի կարգով գործերի քննության առանձնահատկությունները	8
25.	J-C-033-20	Հաշտարարության ինստիտուտի հիմնախնդիրներ	8

4. Վարչաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
26.	J-A-001-20	ՀՀ վարչական վարույթի արդի հարցեր	12
27.	J-A-003-20	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության արդի հարցեր	10
28.	J-A-008-20	ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր	12
29.	J-A-010-20	Հատուկ վարույթի գործերի քննության առանձնահատկությունները	10
30.	J-A-013-20	Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը	8
31.	J-A-014-20	ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները վարչական գործերով	12
32.	J-A-015-20	Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	10
33.	J-A-016-20	ՀՀ էկոլոգիական իրավունքի արդի հարցեր	6

5. Քրեաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
34.	J-Q-001-20	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	6
35.	J-Q-022-20	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	6
36.	J-Q-024-20	Պատիժ նշանակելու, կատարելու, պատժից ազատելու կամ այն փոխարինելու նյութաիրավական և դատավարական հիմնախնդիրներ	6

37.	J-Q-035-20	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	8
38.	J-Q-054-20	Իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրները քրեական գործերով	6
39.	J-Q-056-20	Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները	6
40.	J-Q-071-20	Կոռուպցիոն դեպքերի քննությունը	6
41.	J-Q-072-20	Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննությունը	8
42.	J-Q-074-20	Կալանք և այլ խափանման միջոցներ	6
43.	J-Q-075-20	Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը	6
44.	J-Q-076-20	Անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը	6
45.	J-Q-077-20	Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը	8
46.	J-Q-078-20	Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը	6
47.	J-Q-079-20	Զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում	8
48.	J-Q-080-20	Հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը	8
49.	J-Q-081-20	Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները	8
50.	J-Q-082-20	Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	6

6. Հեռավար ուսուցման ձևով դասավանդվող դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
51.	J-G-017-20	Փաստարկում և հռետորաբանություն	40
52.	J-G-021-20	Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն	40
53.	J-J-027-20	Փախստականների իրավունքների պաշտպանության արդի հարցեր[1]	40
54.	J-J-028-20	Անչափահասների իրավունքների պաշտպանությունը քրեական վարույթի ընթացքում[2]	40
55.	J-Q-079-20	Փախստականների իրավունքներ[3]	40

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. J-J-005-20. Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում

Դասընթացը պայմանավորված է դատավորի էթիկայի, վարքագծի կանոնների և գործունեության գնահատման ոլորտներում նոր իրավակարգավորումներով սահմանված չափանիշների

[1] «Փախստականների իրավունքների պաշտպանության արդի հարցերը» դասընթացը նախատեսված է միայն վարչաիրավական մասնագիտացմամբ դատավորների համար:

[2] «Անչափահասների իրավունքների պաշտպանությունը քրեական վարույթի ընթացքում» դասընթացը նախատեսված է միայն քրեաիրավական մասնագիտացմամբ դատավորների համար:

[3] «Փախստականների իրավունքներ» դասընթացը նախատեսված է միայն քրեաիրավական մասնագիտացմամբ դատավորների համար:

ներկայացման, այս ոլորտներում գիտելիքների ծավալի ընդլայնման և կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդառնան դատավորի էթիկայի կանոնները, գործունեության գնահատման չափանիշները, դատավորի վարքագծի կանոններն ինչպես ի պաշտոնե գործելիս, այնպես էլ այլ գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում, հատուկ անդրադարձ կկատարվի դատավորի ինքնաբացարկի հիմքերին, դրանց կիրառման առանձնահատկություններին, ինչպես նաև զանվածային լրատվության միջոցների հետ և այլ շփումներում դատավորի վարքագծի առանձնահատկություններին:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

2. J-J-014-20. Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն երևույթների, դրանց դեմ տարվող պայքարի ընդհանուր իրավիճակի, հակակոռուպցիոն պայքարի իրավական (ներպետական և միջազգային, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և ԵԽ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) հանձնարարականները) և ինստիտուցիոնալ շրջանակների (ներպետական և միջազգային, այդ թվում՝ ԳՐԵԿՈ և ՄԱՆԻՎԱԼ գործունեությունը), համապատասխան այլ շահագրգիռ կողմերի (հասարարական կազմակերպությունների, ՁԼՄ-երի) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

3. J-J-017-20. Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ ազգային օրենսդրության կիրառման կարողությունների զարգացման ու կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- խտրականության արգելքի և հավասարության ապահովման վերաբերյալ միջազգային պայմանագրերի ուսումնասիրություն,
- խտրականության առանձին ձևերի ուսումնասիրություն,
- միջազգային և ներպետական պրակտիկայում առկա իրավական հիմնախնդիրների վերհանում և քննարկում:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

4. J-J-020-20. ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները

Դասընթացն ուղղված է սահմանադրական արդարադատության զարգացման արդի միտումների վերաբերյալ գիտելիքների ընդլայնմանը և գործնական հմտությունների կատարելագործմանը:

Դասընթացը ներառում է քննարկման ենթակա հետևյալ հարցերի շրջանակը՝

- Սահմանադրական դատարանը՝ որպես ՀՀ-ում սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմին և վերջինիս փոխհարաբերությունները դատական իշխանության այլ մարմինների հետ,
- Սահմանադրական դատարանի առաքելությունը և լիազորությունները,
- Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության առանձնահատկությունները,
- վերացական և կոնկրետ վերահսկողության առանձնահատկությունները,

- Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում,
- իրավական դիրքորոշումները՝ որպես ՍԴ որոշումների անքակտելի բաղկացուցիչ տարր,
- Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը՝ որպես սահմանադրականության ամրապնդման երաշխիք,
- Նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը դատարանների դիմումների հիման վրա,
- Դատարանների կողմից դիմումների ներկայացման ընթացակարգը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

5. J-J-021-20. Դատական ակտերի մշակման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատական ակտերի կազմման և համոզիչ իրավական վերլուծությունների կատարման, իրավամեկնաբանողական հնարքների կիրառման ոլորտներում կարողությունների և գործնական հմտությունների ձևավորման, կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- դատական փաստաթղթերի ձևակերպման մեթոդները,
- արտահայտման հստակ ոճի ապահովումը, որը հասկանալի է նշված փաստաթղթերն ընթերցողների համար,
- գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն դատական ակտի ձևակերպման ընթացքում (փաստեր և հարցեր, լսարան, հրապարակում),
- նյութերի վերանայման մեթոդները,
- իրավամեկնաբանման հնարքներ,
- տարատեսակ դատական փաստաթղթերի ձևակերպումը, ուշադրության սևեռումը կառուցվածային տարբերություններին (ներածություն, հարցերի ներկայացում, փաստերի ներկայացում, իրավական սկզբունքների քննարկում, վերանայման չափանիշ, քննարկվող հարցերի հերթականություն, հարցեր, որոնց պետք է անդրադառնալ, գործերի հիշատակում (ներառյալ ՄԻԵԴ-ի վճիռները), մեջբերումներ, խուսափում շահերի պաշտպանությունից),
- դատական ձևակերպումներում հնարավոր խնդիրները (բառերով ծանրաբեռնվածություն, հստակության և պարզության պակաս, վատ կազմակերպում, թաքնված վերլուծություն, պերճություն և հումոր),
- լավ ձևակերպման ուղեցույցները,
- համատեղ վճիռների, տարբերվող կարծիքների ձևակերպման մեթոդներ:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

6. J-J-030-20. Դատական իշխանության անկախություն և թափանցիկություն

Դասընթացն ուղղված է դատական իշխանության անկախության ներքին և արտաքին կողմերի, իրավական հիմքերի, երաշխիքների, ինչպես նաև սահմանադրաիրավական (դատաիրավական) բարեփոխումների շրջանակում դատական իշխանության անկախությանը վերաբերող հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնմանը և գործնական հմտությունների կատարելագործմանը:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա են դառնալու «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով նախատեսված՝ դատական իշխանության անկախությանը միջամտելու միջոցների արդյունավետությանը, դրանց հնարավոր իրավական հետևանքներին, դատավորների նկատմամբ ոչ իրավաչափ ազդեցության դեպքում պետական մարմինների կողմից արձագանքելու պարտականությանը վերաբերող հիմնահարցերը, ինչպես նաև քննարկվելու են դատական իշխանության անկախությանը միջամտության համար պատասխանատվության տեսակները, դատական անձեռնմխելիության սահմանների խնդիրները, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

7. J-J-031-20. Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար

Դասընթացն ուղղված է արդարադատության ողջ շղթայում սեռի հիմքով բռնության դեմ պայքարին առնչվող հարցերի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, այս բնագավառում գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու կատարելագործմանը:

Դասընթացը ընդհանուր գիտելիքներ կապահովի կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերի և սեռի հիմքով բռնության, Հայաստանում դրա տարածվածության և բռնության նկատմամբ վերաբերմունքին առնչվող հիմնահարցերի մասին, ինչպես նաև ընդհանուր պատկերացում կտա համապատասխան միջազգային գործիքակազմի և կիրառելի ստանդարտների վերաբերյալ: Դասընթացի շրջանակում անդրադարձ կկատարվի զոհի անվտանգությունն ապահովելու նպատակով անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների իրականացմանը, ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ հաշտարարության գործերում առկա հիմնահարցերին, միջգերատեսչական համագործակցության ստանդարտներին, քրեական վարույթի առանձնահատկություններին՝ գործի քննությունից մինչև դատավճռի կայացման փուլն ընկած ողջ ժամանակահատվածում:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

8. J-J-073-20. Ներքին ուսումնասիրություններ (քննություն)

Դասընթացն անհրաժեշտ է աշխատավայրում ծառայողական քննությունների անցկացման, ներքին աուդիտի ուսումնասիրությունների, ազդարարների պաշտպանության, արտաքին հետաքննություն իրականացնողներին իրազեկման ոլորտում անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների կատարելագործման, վերջիններիս կիրառման գործնական հմտությունների զարգացման համար:

Այս դասընթացի ընթացքում կուսումնասիրվեն պետական կառավարման մարմիններում ծառայողական քննության ընթացակարգը և պատասխանատվությունը, ներքին աուդիտի դերը և գործառույթները, պետության ֆինանսական վերահսկողության գործառույթը և դրա իրականացման ընթացակարգն ու հաշվետվողականությունը, ազդարարումը և սուտ մատնությունը, ինչպես նաև ազդարարման արտոնությունից օգտվելու չարաշահումները, տարբերությունները և հնարավոր համընկնումները, իրավապահ մարմիններին իրազեկելու պարտասխանատվություն ունեցող իրավասու անձանց նույնականացումը և այլ հիմնահարցեր:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

9. J-S-001-20. Սնանկության վարույթի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է սնանկության վարույթի ընթացքում ծագող իրավական հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և գործնական հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- Սնանկության գործերի քննության կարգը, առանձնահատկությունները, նիստերի վարման գործնական հմտությունները,
- պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերն ու անվճարունակության հատկանիշները,
- սնանկ ճանաչված անձի և պարտատերերի իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը (այդ թվում՝ պարտապանի անունից սնանկության կառավարչի կողմից հայց հարուցելու ինստիտուտի առանձնահատկությունները),
- պարտապանի, պարտատիրոջ կամ այլ անձանց՝ դատարան դիմելու պարտականությունը և վերջինիս չկատարման պարագայում պատասխանատվության առանձնահատկությունները,
- կեղծ և կանխամտածված սնանկության իրավական կարգավորումը,

- սնանկության վտանգի վարույթի առանձնահատկությունները (այդ թվում՝ սնանկության վտանգի վարույթում ներկայացվող պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիրը, սնանկության վտանգի դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելը),
- պարտապանի սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը բավարարելու հետևանքները,
- պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը (մորատորիումը), (այդ թվում՝ մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների թույլատրումը և առանձնահատկությունները սնանկության վտանգի վարույթում),
- սնանկ ճանաչելու առանձնահատկությունները կամավոր և հարկադրված սնանկության դիմումների հիման վրա,
- պարտապանին սնանկ ճանաչելը պարտատիրոջ (պարտատերերի) դիմումի հիման վրա,
- պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու հետևանքները,
- սնանկության գործով առանձին պահանջների քննության կասեցման հիմքերը և կարգը,
- սնանկության կառավարչի լիազորությունները, գործողությունների վիճարկման առանձնահատկությունները,
- ապահովված իրավունքի առարկայի իրացման և ապահովված պահանջի չափը հաստատելու մասին դիմումի քննության կարգի հիմնախնդիրները,
- պարտապանի գույքի պահպանումը, գույքագրումը, իրացման կարգն ու առկա խնդիրները,
- պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման, քննարկման, հաստատման առանձնահատկություններն ու ժամկետները,
- իրավաբանական անձի լուծարման և պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթները,
- ապահովված, չապահովված և սահմանված ժամկետում դատարան չներկայացված պահանջների բավարարման առանձնահատկությունները, պահանջների, բավարարման հերթականությունը,
- սնանկության անվիճելիությունը,
- ֆիզիկական անձանց սնանկության առանձնահատկությունները,
- բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության առանձնահատկությունները, օրենսդրահիրավական կարգավորումները,
- սնանկության պարզեցված ընթացակարգերը,
- սնանկության գործի ավարտն ու վերը նշված հիմնահարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է սնանկության գործեր քննող դատավորների համար:

10. J-S-002-20., 19. J-C-022-20. ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և դրանց կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներդրված նոր ինստիտուտները և իրավակարգավորումները ներկայացնելու համար:

Դասընթացը ներառում է՝

- քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու հիմնահարցերը,
- ապացուցման հիմնահարցերը, ապացուցման բեռի բաշխման կանոնները և ապացույցների գնահատման հմտությունները,
- դատաքննության հիմնահարցերը,
- դատավարական ժամկետներն ու դրանց կառավարման մեթոդները,
- դատական ծախսերի (ներառյալ այլ ծախսերի) հաշվարկման ու գանձման առանձնահատկությունները,
- հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման և նախնական ապահովման կիրառման առանձնահատկությունները,
- հակընդդեմ հայցը և դրա չներկայացման դատավարական հետևանքները,

- պարզեցված ընթացակարգով գործերի քննության առանձնահատկությունները,
- դատավարության վարման, դատաքննության անցկացման տակտիկայի և տեխնիկայի որոշ հարցեր,
- դատավարության նորմերի կիրառման հետ կապված այլ հիմնահարցեր:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական և սնանկության գործեր քննող դատավորների համար:

11. J-S-003-20, 16. J-C-003-20. Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է կորպորատիվ իրավունքում առկա հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է կորպորատիվ կառավարման սկզբունքների, կորպորատիվ իրավունքի սուբյեկտների, դրանց ստեղծման, վերակազմակերպման, լուծարման, գործունեության կազմակերպման, մասնակիցների իրավունքների և պարտականությունների, արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման, կորպորատիվ վեճերի և այլ հարցերի հետ կապված իրավահարաբերություններից բխող հիմնահարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական և սնանկության գործեր քննող դատավորների համար:

12. J-S-004-20, 15. J-C-001-20. Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է պարտավորական իրավունքի վերաբերյալ նոր իրավական դիրքորոշումներն ունկնդիրներին մատուցելու, պարտավորական իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերի կիրառման գործնական հմտությունների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է պայմանագրային և քվազի-պայմանագրային (անհիմն հարստացման, առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունների) պարտավորությունների, արտապայմանագրային (դելիկտային), մասնավորապես, ոչ նյութական վնասի հատուցման, քաղաքացու կյանքին, առողջությանը պատճառված վնասը հատուցելու ինստիտուտի առանձնահատկությունների, ապահովագրական իրավահարաբերություններից բխող հիմնահարցերը, պարտավորական իրավունքի ինստիտուտում քաղաքացիաիրավական պատասխանատվության այլ ձևերը, ինչպես նաև վերը նշված հիմնահարցերի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական և սնանկության գործեր քննող դատավորների համար:

13. J-S-005-20. Բանկային իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է բանկային իրավունքի վերաբերյալ նոր իրավական դիրքորոշումներն ունկնդիրներին մատուցելու, բանկային իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերի կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացն անդրադառնում է բանկային գործունեության իրավական կարգավորմանը ՀՀ-ում, բանկային գործունեություն իրականացնող մարմինների իրավական վիճակի առանձնահատկություններին, բանկային օրենսդրության խախտումների համար սահմանված պատասխանատվությանը, դրամի շրջանառության և անկանխիկ հաշվարկների, ինչպես նաև արժութային և արտարժութային բանկային գործառույթների իրավական կարգավորման հիմնախնդիրներին:

Դասընթացը նախատեսված է սնանկության գործեր քննող դատավորների համար:

14. J-S-006-20. Ֆինանսական կառավարում

Դասընթացը պայմանավորված է ֆինանսական կառավարման ժամանակակից հայեցակարգերի և զարգացման ուղղությունների վերաբերյալ նոր դիրքորոշումներն Ունկնդիրներին մատուցելու, ֆինանսական կառավարման հարաբերությունները կարգավորող իրավանորմերի կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացն անդրադառնում է ֆինանսական կառավարման օրենսդրական հիմքերին, ժամանակակից մեթոդներին և մեխանիզմներին, ինչպես նաև նշված ոլորտում արդի այլ հիմնախնդիրներին:

Դասընթացը նախատեսված է սնանկության գործեր քննող դատավորների համար:

17. J-C-008-20. ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է աշխատանքային իրավունքի արդի հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև այդ կապակցությամբ իրավական նոր դիրքորոշումները ունկնդիրներին մատուցելու համար:

Այն ներառում է աշխատանքային իրավահարաբերությունների ծագման, դադարման, աշխատանքային իրավահարաբերությունների կողմերի իրավունքների պաշտպանության, պատասխանատվության, աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության և վերահսկողության հարցերը, դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

18. J-C-015-20. Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները, դրանց կիրառման գործնական հմտությունները զարգացնելու, կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է քաղաքացիական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, ներառյալ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և դրա կիրառման հարցերը, այդ թվում՝

- արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը,
- դատարանի իրավունքը,
- օրենքի հիման վրա ստեղծված անկախ տրիբունալի էությունը,
- անկողմնակալ տրիբունալի էությունը,
- ՄԻԵԿ 6-րդ հոդվածի վարույթային տարրերը՝ արդարացի լսումները, մրցակցության սկզբունքը, «Զենքերի» հավասարությունը, հրապարակային քննության, ողջամիտ ժամկետի սկզբունքը:

Դասընթացը, մասնավորապես, ներառում է վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ վերջին տարիների ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

20. J-C-023-20. Ոչ նյութական վնասի հատուցման հիմնախնդիրներ

Դասընթացն անհրաժեշտ է ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ նոր իրավական դիրքորոշումներն ունկնդիրներին մատուցելու՝ պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի, ինչպես նաև ոլորտում առկա կոնվենցիոնալ մեխանիզմներն առավել համակողմանի ուսումնասիրելու, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգին և պայմաններին վերաբերող հարցերի, քաղաքացու կյանքին, առողջությանը պատճառված վնասը հատուցելու ինստիտուտի առանձնահատկությունների վերա-

բերյալ համակողմանի քննարկումներ իրականացնելու, անհրաժեշտ գիտելիքների և պրակտիկ փորձի համադրմամբ՝ ունկնդիրների գործնական հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի, ինչպես նաև կոնվենցիոն իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգին և պայմաններին վերաբերող հարցերը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

21. J-C-028-20. ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քաղաքացիական գործերով

Դասընթացն անդրադառնում է քաղաքացիական իրավունքի և դատավարության ոլորտում ՀՀ վճաբեկ դատարանի կողմից կայացված որոշումների քննարկմանն ու ներկայացմանը:

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրության առարկա դարձնել Վճռաբեկ դատարանի 2017-2019 թթ. որոշումները:

Հատուկ քննարկման առարկա կդառնան քաղաքացիաիրավական գործարքների վավերության պայմանների, սեփականության իրավունքի ծագման, փոփոխման և դադարման առանձնահատկությունների, հեղինակային և հարակից իրավունքների ծագման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

22. J-C-029-20. ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հարցեր

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրության առարկա դարձնել քաղաքացիական իրավունքի առավել արդիական հիմնախնդիրները, որոնք կարող են պայմանավորված լինել ինչպես նոր իրավական ինստիտուտների պրակտիկ կիրառման ընթացքում ի հայտ եկող խնդրահարույց հարցերի, այնպես էլ իրավական նորմերի՝ գործնականում կիրառման հետ:

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել՝

- քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման և դադարման հիմնահարցերը,
- քաղաքացիական իրավահարաբերությունների կողմերի իրավունքների պաշտպանության և պատասխանատվության հիմնահարցերը,
- հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման առանձնահատկությունները քաղաքացիական հարաբերություններում,
- սեփականության և այլ գույքային իրավունքների առավել արդիական հիմնախնդիրները,
- գույքի առանձին տեսակների ժառանգման առանձնահատկությունները, ժառանգության ընդունման և դրանից հրաժարման առանձնահատկությունները (տրանսմիսիա, ընդունումը ներկայացման իրավունքով),
- մտավոր սեփականության օբյեկտները և դրանց իրավական պաշտպանության առանձնահատկությունները, հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությունը,
- ընտանեկան իրավունքի արդի որոշ հարցեր (ամուսնության դադարում, ամուսնության անվավերություն, ալիմենտային պարտավորությունների վճարման և բռնագանձման կարգը և այլն),
- հարևանային իրավունքի, սերվիտուտի, ապահովված իրավունքի, տույժերի հաշվարկի և այլ հիմնախնդիրների վերաբերյալ իրավական կարգավորումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

23. J-C-031-20. Իրավական օգնություն, օտարերկրյա դատական ակտերի և արբիտրաժի վճիռների ճանաչման ու հարկադիր կատարման վերաբերյալ դիմումներով գործերի վարույթ

Դասընթացը պայմանավորված է միջազգային փոխօգնության արդի հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման ու դրանց գործնական կիրառման հմտությունների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ միջազգային պայմանագրերով նախատեսված միջազգային փոխօգնության տեսակների, եղանակների, սուբյեկտների, պայմանների, օտարերկրյա դատարանների ու առևտրային արբիտրաժների ակտերի ճանաչման ու կատարման վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

24. J-C-032-20. Հատուկ հայցային վարույթի և հատուկ վարույթի կարգով գործերի քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է հատուկ վարույթի և հատուկ հայցային վարույթի կարգով գործերի առանձին տեսակների առանձնահատկությունների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու, դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև այդ կապակցությամբ իրավական նոր դիրքորոշումները ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացը ներառում է հատուկ և հատուկ հայցային վարույթների առանձին տեսակների, այդ թվում՝ երեխայի որդեգրման, քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու, իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման, հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման, առանձին աշխատանքային վեճերով, կորպորատիվ վեճերով, խմբային հայցի հիման վրա քննվող, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ, ընտանեկան գործերով վարույթների առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

25. J-C-033-20. Հաշտարարության ինստիտուտի հիմնախնդիրները

Դասընթացն անհրաժեշտ է հաշտարարության ինստիտուտի ոլորտում առկա հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- հաշտարարության ինստիտուտի ընդհանուր բնութագիրը,
- հաշտարարության վերաբերյալ համաձայնությունն ու կիրառման առանձնահատկությունները,
- հաշտարարություն և հաշտարարի նշանակումը, հաշտարարության հետ կապված ծախսերը,
- հաշտարարության շրջանակը, ժամկետները և ավարտը,
- արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը և այլ հիմնահարցեր:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

26. J-A-001-20. ՀՀ վարչական վարույթի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է վարչական վարույթում առկա արդի հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու համար:

Դասընթացը ներառում է՝

- վարչական ակտի պարտադիր հատկանիշները,
- վարչական վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանության հիմնահարցերը,
- վարչական վարույթի և հատուկ նորմերի հարաբերակցության հարցերը,
- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթի արդի հարցերը,
- տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի արդի հարցերը,
- մաքսային կարգավորման առանձնահատկությունները Եվրասիական տնտեսական միության անդամակցության համատեքստում, մաքսային իրավահարաբերություններից բխող վեճերի հիմնահարցերը,

- հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների ստուգման առանձնահատկությունները,
- կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվելուց հետո կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու առանձնահատկությունները,
- կոնվենցիոն հիմքերից դուրս փախստականի կարգավիճակի տրամադրման առանձնահատկությունները,
- վարչարարությամբ պատճառված վնասն ու դրա հատուցման առանձնահատկությունները,
- վարչական վարույթի առանձին հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

27. J-A-003-20. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության ոլորտում դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու, ունկնդիրների տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու համար:

Դասընթացը ներառում է՝

- վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքների գնահատման առանձնահատկությունները,
- վարչական պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքների գնահատման առանձնահատկությունները,
- վարչակամ տույժի տեսակները, տույժ նշանակելու կանոններն ու ժամկետները,
- վարչական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կիրառման առանձնահատկությունները,
- վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրները, մասնակիցները, ապահովման միջոցները և փուլերը,
- տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

28. J-A-008-20. ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու համար:

Դասընթացը ներառում է՝

- գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում ծագող հարցերը,
- դատաքննության հիմնահարցերը,
- ապացուցման հիմնահարցերը,
- ի պաշտոնե քննության սահմանները և կողմերի ապացուցման բեռը կրելու սահմանը՝ գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի պարտականության համատեքստում,
- հայցի ապահովման հիմնահարցերը,
- հայցերի առանձին տեսակների, այդ թվում՝ այլևս իրավաբանական ուժ չունեցող վարչական ակտի կամ սպառված գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելը ճանաչելու հայցի ընդունելիության և քննության առանձնահատկությունները, վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վիճարկման հայց ներկայացնելու դեպքում դատավարական ժամկետների հաշվարկման առանձնահատկությունները,
- կենսաթոշակային իրավահարաբերություններից բխող վեճերի դատական կարգով լուծման առանձնահատկությունները,

- փախստականների կարգավիճակի որոշման և ապաստանի տրամադրման դատական վարույթների առանձնահատկությունները,
- Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումների և գործողությունների վիճարկման և դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի հիմնահարցերը,
- դատական ծախսերը, ներառյալ դատարանի կողմից անհրաժեշտ ճանաչված «այլ ծախսերի» տեսակները,
- վերաքննիչ և վճռաբեկ վարույթների հիմնահարցերը,
- վարչական դատավարության իրավունքին առնչվող ՍԴ որոշումները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

29. J-A-010-20. Հատուկ վարույթի գործերի քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է հատուկ վարույթների առանձին տեսակների առանձնահատկությունների վերաբերյալ դատավորների գիտելիքներն ընդլայնելու, դրանց կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև այդ կապակցությամբ իրավական նոր դիրքորոշումներն ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացը ներառում է հատուկ վարույթների առանձին տեսակների, այդ թվում՝ հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի, ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթի, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթի, անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթի, հասարակական կազմակերպության ներկայացրած հայցով գործերի քննության վարույթի, լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի, նոտարի գործողությունների (ներառյալ՝ ժառանգության վկայագիր տրամադրելուն ուղղված նոտարական գործողությունների) իրավաչափության վերաբերյալ գործերի վարույթի, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի, անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վարույթի առանձնահատկությունները, ինչպես նաև հատուկ վարույթի գործերի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

30. J-A-013-20. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը

Դասընթացն անհրաժեշտ է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթ իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և գործնական հմտություններ զարգացնելու համար:

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ներկայացնել և քննարկել նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները՝ վարչական դատարան դիմելու իրավունքը, վարչական դատարան դիմելու ժամկետները, դիմումին ներկայացվող պահանջները, դիմումի ապահովումը վարչական դատարանի որոշմամբ, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի կազմը, վարչական դատարանի դատական ակտերը, դրանց բնույթը և իրավական հետևանքները, դատական ակտ կայացնելու առանձնահատկությունները, վարչական դատարանի դատական ակտերի պաշտոնական հրապարակումը և թեմային առնչվող այլ հարցեր:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

31. J-A-014-20. ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները վարչական գործերով

Դասընթացն անդրադառնում է վարչական իրավունքի և դատավարության ոլորտում ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներով արտահայտած դիրքորոշումների քննարկմանն ու ներկայացմանը:

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրության առարկա դարձնել Վճռաբեկ դատարանի 2017-2020 թվականների որոշումները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

32. J-A-015-20. Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները, դրանց կիրառման գործնական հմտությունները զարգացնելու, կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է վարչական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, ներառյալ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումներն ու դրանց կիրառման հարցերը, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը, օրենքի հիման վրա ստեղծված անկախ տրիբունալի էությունը, ՄԻԵԿ 6-րդ հոդվածի վարութային տարրերը՝ արդարացի լսումները, մրցակցության սկզբունքը, հրապարակային քննության, ողջամիտ ժամկետի սկզբունքը:

Դասընթացը, մասնավորապես, ներառում է վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ վերջին տարիների ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

33. J-A-016-20. ՀՀ էկոլոգիական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է ՀՀ էկոլոգիական իրավունքի ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- էկոլոգիական իրավունքի կոնցեպցիան,
- ՀՀ էկոլոգիական օրենսդրության և հիմնական ինստիտուտների էությունը և առանձնահատկությունները,
- այլ ինստիտուտների հետ հարաբերակցությունը և զարգացման արդի միտումները,
- մարդու էկոլոգիական իրավունքների պաշտպանության ազգային և միջազգային կառուցակարգերի գործարկման վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

34. J-Q-001-20. Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները, դրանց կիրառման գործնական հմտությունները զարգացնելու, կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1, 5-7, 10 և 13-րդ հոդվածների վերաբերյալ ՄԻԵԴ որոշումները, այդ թվում՝

- խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրները,
- անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը,

- մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը,
- արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքը:

Դասընթացը, մասնավորապես, ներառում է վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ ՄԻԵԴ վերջին տարիների իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

35. J-Q-022-20. ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումների, վիճահարույց հարցերի շուրջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների մատուցման, դրանք գործնականում կիրառելու, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման և դրանց նկատմամբ դատական վերահսկողության ապահովման կարողությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի կարգավորումները, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2017-2020 թվականների ընթացքում կատարված օրենսդրական փոփոխությունների կիրառման առանձնահատկությունները, ներառյալ տեխնիկական միջոցների կիրառման կարգի վերաբերյալ նոր իրավակարգավորումները, ձերբակալման իրավաչափության բողոքարկման ինստիտուտը, մասնավոր գանգատի գործերի շրջանակի փոփոխությունը և այլն,
- ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթին վերաբերող առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները,
- քրեական դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների և ՀՀ նկատմամբ դրանց կիրառման հարցերը,
- քրեական դատավարության ոլորտում ՀՀ վճաբեկ դատարանի կողմից կայացված որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները,
- արդար դատաքննության իրավունքի ապահովման արդի հիմնախնդիրները,
- քննչական գործողությունների կատարման ընթացքում ծագող գործնական հիմնահարցերը, առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական և քրեագիտական առանձնահատկությունները,
- դատավարական հարկադրանքի միջոցները,
- օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ դատական վերահսկողության հիմնախնդիրները,
- ապացույցների և ապացուցման գործընթացի խնդիրները, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացուցման գործընթացում օգտագործելու իրավական կարգավորման խնդիրները, ապացույցների թույլատրելիության հիմնախնդիրները,
- պետական, նոտարական և բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու դատավարական կարգը,
- քաղաքացիական հայցի լուծման և դատական ծախսերի վերականգնման հիմնախնդիրները քրեական դատավարությունում,
- Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) հիմնախնդիրները քրեական դատավարությունում.
  - «Վկա» եզրույթի ինքնուրույն նշանակությունը,
  - վկաներին հարցաքննելու իրավունքը կամ այն իրավունքը, որ վկաները ենթարկվեն հարցաքննության,

- ընդհանուր սկզբունքներ,
- վկայի ներկայությունն ապահովելու համար ողջամիտ ջանքեր գործադրելու պարտավորությունը,
- վկային լսելը մերժելու հիմնավորման պարտավորությունը,
- վկաների՝ դատարանում բանավոր ձևով չներկայացված ցուցմունքների վրա հիմնվելը,
- անանուն վկաները,
- վկաներին իրենց ցուցմունքների դիմաց առաջարկվող առավելությունները,
- ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքները,
- պաշտպանության համար անձանց որպես վկա կանչելու իրավունքը,

– ՀՀ քրեադատավարական օրենսդրության ոլորտի նոր կարգավորումները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

36. J-Q-024-20. Պատիժ նշանակելու, կատարելու, պատժից ազատելու կամ այն փոխարինելու նյութաիրավական և դատավարական հիմնախնդիրներ

Դասընթացը պայմանավորված է պատժողական քաղաքականության հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ: Դասընթացը ներառում է ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժի տեսակների և նշանակման հիմնահարցերի, այդ թվում՝ պատժի նշանակման հարցում քրեադատավարական նորմերի ազդեցության (պատժատեսակի, պատժաչափի, պատժից ազատելու, պայմանականորեն այն չկիրառելու, հետաձգելու, մեղմ կամ խիստ պատիժ նշանակելու չափորոշիչների) վերաբերյալ հիմնահարցերը: Դասընթացը ներառում է նաև պատժի կատարման ընթացքում ՀՀ քրեակատարողական օրենսգրքի կիրառման, ինչպես նաև պրոբացիոն ծառայության և դրա նկատմամբ դատական վերահսկողության արդի հիմնախնդիրները, առանձին անդրադարձ է կատարվում ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու ինստիտուտի կիրառման առանձնահատկություններին ու առկա խնդիրներին:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

37. J-Q-035-20. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

– քրեական նոր օրենսգրքի նախագծի հիմնադրույթները,
– հանցագործությունների որակման իմացաբանական հիմունքները,
– ըստ հանցակազմի տարրերի (օբյեկտ, օբյկետիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ) հանցագործությունների որակման առանձնահատկությունները,
– չավարտված հանցավոր գործունեության և հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքերում արարքների որակման հիմնախնդիրները,
– հանցագործությունների բազմակիության դեպքում հանցավոր արարքների որակման և եզակի բարդ հանցագործություններից դրանց սահմանազատման հիմնախնդիրները,
– քրեաիրավական նորմերի մրցակցության (բովանդակային և տեմպորալ) դեպքում հանցագործությունների որակման հիմնախնդիրները,
– հանցակցությամբ կատարվող հանցագործությունների որակման հիմնախնդիրները, մասնավորապես՝ հանցակիցների տեսակների և հանցակցության ձևերի տարանջատման հիմնահարցերը և հանցակցության ձևերի որակման առանձնահատկությունները, հանցակցի սահմանազանցման, հանցակցի կողմից հանցագործությունից կամովին հրաժարվելու, չհաջողված հանցակցության որակման, հատուկ սուբյեկտով հանցագործություններում հանցակցության որակման հիմնահարցերը, ինչպես նաև հանցագործության միջնորդա-

վորված կատարման որակման հիմնախնդիրներն ու առնչակցությունը հանցակցությունից սահմանազատելու և որակելու հիմնահարցերը,
- բլանկետային նորմերով և արժեքավորվող հատկանիշներով հանցագործությունների որակման առանձնահատկությունները,
- արարքի հանցավորությունը, քրեական պատասխանատվությունը և պատիժը բացառող հանգամանքները, պատժի ինստիտուտին և պատիժ նշանակելուն առնչվող հարցերը,
- ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հանցավոր արարքների (մասնավորապես՝ մարդու կյանքի և առողջության, սեռական ազատության և անձեռնմխելիության, ընտանիքի և երեխայի շահերի, սեփականության, տնտեսական գործունեության (այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացման), հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության, մասնավորապես՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, շրջակա միջավայրի անվտանգության, ինչպես նաև պետական իշխանության, պետական ծառայության, կառավարման կարգի և արդարադատության, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների և այլն) ճշգրիտ որակման հիմնահարցերը, հարակից հանցակազմերը միմյանցից սահմանազատելու հիմնախնդիրները և դրանց լուծման ոլորտում օրենսդրական ու իրավակիրառ փորձը,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքներն ու դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը),
- քրեական իրավունքի ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումներն ու ՀՀ նկատմամբ դրանց կիրառման հարցերը.
- քրեական իրավունքի ոլորտում ՀՀ վճաբեկ դատարանի կողմից կայացված որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները,

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

38. J-Q-054-20. Իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրները քրեական գործերով

Դասընթացը պայմանավորված է քրեական գործերով միջազգային փոխօգնության արդի հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու դրանց գործնական կիրառման հմտությունների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ միջազգային պայմանագրերով նախատեսված միջազգային փոխօգնության տեսակների, եղանակների, սուբյեկտների, պայմանների վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

39. J-Q-056-20. Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման օրենսդրական պահանջների, միջազգային չափանիշների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է խոշտանգումների քրեաիրավակն բնութագիրը, որակման առանձնահատկությունները, հարակից հանցակազմերից սահմանազատելու հիմնահարցերը, խոշտանգումների վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Ինչպես նաև դրա կանխարգելման, արձանագրման և արդյունավետ բացահայտման, Ստամ-

բուլի արձանագրության չափանիշներին համապատասխան խոշտանգումների ու վատ վերաբերմունքի հետքերի փաստագրման վերաբերյալ հարցերը, խոշտանգումների վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկան:

40. J-Q-071-20. Կոռուպցիոն դեպքերի քննությունը

Դասընթացն անհրաժեշտ է կոռուպցիոն դեպքերի քննությանն առնչվող հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացի շրջանակում քննարկվելու են կոռուպցիոն դեպքերի քննության առանձնահատկությունները, կոռուպցիոն հանցագործությունների պատճառները և հետևանքները, կոռուպցիայի դեմ պայքարի ազգային և միջազգային փորձը, կոռուպցիայի դեմ պայքարի իրավական և կազմակերպական հիմքերը (ՀՀ և միջազգային), կանխմանն ուղղված սահմանափակումները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

41. J-Q-072-20. Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննությունը

Դասընթացը պայմանավորված է պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննության ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա են դառնալու քրեական և քաղաքացիական հակակոռուպցիոն գործերով դատական պրակտիկան, մասնավորապես՝

- ապօրինի հարստանալը. անմեղության կանխավարկածը և ապացուցման բեռի բաշխումը, ներպետական օրենսդրական կարգավորումը և արտասահմանյան փորձը (համեմատահրավական հետազոտության արդյունքները),
- դատարանների կողմից կոռուպցիա հանդիսացող հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունը. կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային իրավական դրույթների կիրառումը դատարանների կողմից, ծագող խնդիրները, խոչընդոտները, դրանց հաղթահարման եղանակները,
- կաշառք ստանալու կամ տալու նմանակում. ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները,
- ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված կոռուպցիոն առանձին հանցատեսակներով (օրինակ՝ ազդեցության շահարկում) դատական պրակտիկայի ձևավորման հիմնախնդիրները, հաղթահարման ուղիները, ՀՀ և արտասահմանյան փորձը:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

42. J-Q-074-20. Կալանք և այլ խափանման միջոցներ

Դասընթացն անհրաժեշտ է կալանք և այլ խափանման միջոցներ կիրառելու դեպքերի վերաբերյալ ազգային և միջազգային փորձի ուսումնասիրության, այս ոլորտում անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների կատարելագործման, գործնական խնդիրների վերհանման և փորձի փոխանակման համար:

Դասընթացի շրջանակում ուսումնասիրման առարկա կդառնան ազատության սահմանափակման հիմքերը, ազատությունից զրկված անձանց համար նախատեսված երաշխիքները, կներկայացվեն կալանքի օրինականության վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները:

Դասընթացը ներառում է նաև հետևյալ հարցերը՝

- այլ խափանման միջոցների համակարգը (միջազգային չափանիշներ, ՄԻԵԴ-ի վճիռներ),
- գրավը,
- ստորագրությունը՝ չհեռանալու մասին,
- անձնական երաշխավորությունը,
- կազմակերպության երաշխավորությունը,

– հսկողության հանձնելը (անչափահասների նկատմամբ այլ խափանման միջոցների կիրառման առանձնահատկությունների համատեքստում),
– հրամանատարության հսկողության հանձնելը,
– օտարերկրացիների նկատմամբ այլ խափանման միջոցների կիրառման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

43. J-Q-075-20. Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը

Դասընթացն ուղղված է գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քրեականացման մարտահրավերների և առկա բացերի, թերությունների, նշված հանցագործությունների հանդեպ հանդուրժողականության պատճառների և առկա իրավիճակը հաղթահարելու հնարավոր ուղիների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների կատարելագործմանը, տվյալ ոլորտում փորձի փոխանակմանը:

Դասընթացի շրջանակում կուսումնասիրվեն ՀՀ քրեական օրենսդրությամբ սեքսուալ հետապնդման և սեքսուալ չարաշահումների/շահագործման համար քրեական պատասխանատվություն առաջացնող արարքները՝ որպես գենդերային հանցագործություններից պաշտպանության տարատեսակներ, այս հանցագործությունների քննության մեթոդիկայի, քննության տակտիկայի, քրեական հետապնդման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

44. J-Q-076-20. Անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը

Դասընթացն անհրաժեշտ է անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանության ոլորտում գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև իրավական նոր դիրքորոշումները ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկումները տեղի կունենան, մասնավորապես, հետևյալ ասպեկտներով՝
– անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները,
– անչափահաս և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների մասնակցությամբ վարույթի սկզբունքային առանձնահատկությունները, ներպետական օրենսդրական կարգավորումները և միջազգային փորձը,
– անչափահաս և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման առանձնահատկությունները,
– ապացուցման գործընթացի առանձնահատկությունները,
– անչափահաս և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների մասնակցությունը քննչական և դատավարական գործընթացին,
– օրինական ներկայացուցչի և պաշտպանի մասնակցությունը անչափահաս և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների մասնակցությամբ վարույթին:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

45. J-Q-077-20. Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը

Դասընթացի նպատակը կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործությունների քննության և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ծավալի ընդլայնումն ու կատարելագործումն է:

Դասընթացի շրջանակում քննարկումները տեղի կունենան հետևյալ ասպեկտներով՝

– ֆինանսական հանցագործությունների բնորոշումը. փողերի լվացում, բանկային գաղտնիք, արժեթղթերի շուկայի չարաշահումներ, հարկեր թաքցնել, եկամուտների հայտարարագրման հիմնախնդիրներ,
– անդրազգային կազմակերպված հանցավորությունը, սահմանումները, տիպերը, բնութագրերը, պատճառները, հետևանքները և ֆինանսական հանցագործություններին ու անդրազգային կազմակերպված հանցավորությանը արձագանքելու հետ կապված այլ հարցեր:

Դասընթացի շրջանակում ներկայացվելու են քննարկվող նյութի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, միջազգային փորձը, իրական կյանքից վերցված գործնական իրավիճակներ:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

46. J-Q-078-20. Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը

Դասընթացը անհրաժեշտ է մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության և դրանց դեմ պայքարի ոլորտում արդի խնդիրները քննության առարկա դարձնելու, այս բնագավառում գիտելիքների ծավալը ընդլայնելու, գործնական հմտությունները կատարելագործելու համար: Դրա շրջանակում կուսումնասիրվեն մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների տիպերը, բնութագրերը, պատճառները, հետևանքները, մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

47. J-Q-079-20. Զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում

Դասընթացը պայմանավորված է քրեական դատավարությունում զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունների, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ու ապահովման վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝
– քրեական դատավարությունում զոհի իրավական կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները,
– զոհերի համար ընթացակարգային երաշխիքները,
– զոհերի պաշտպանությունը և նրանց աջակցության տրամադրումը (երկրորդային վիկտիմիզացման կանխարգելում, պաշտպանություն ապաբեկումից, վրեժխնդրությունից, և այլն),
– զոհերի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի ապահովումը,
– զոհերին փոխհատուցումը,
– զոհերի քաղաքացիական հայցի ապահովումը քրեական դատավարությունում,
– ընթացակարգային հարմարությունները խոցելի զոհերի համար (խոցելի զոհերի բացահայտում, երեխաներ, հաշմանդամություն ունեցող զոհեր, սեռական հանցագործությունների զոհեր, մարդկանց թրաֆիկինգի զոհեր և այլն):

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

48. J-Q-080-20. Հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը

Դասընթացը պայմանավորված է հաղորդակցության կառավարման համատեքստում հարցաքննության մեթոդների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- հաղորդակցության ընդհանուր տեսանկյունները (թե՛ խոսքային, թե՛ ոչ խոսքային, բանավոր և գրավոր, լսող կողմի ընկալմանը նպաստող մեթոդներ, արդյունավետ ունկնդրում),
- հաղորդակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ,
- հաղորդակցությունը վկաների հետ,
- հաղորդակցությունը զոհերի հետ,
- հաղորդակցությունը մեղադրյալի հետ,
- հաղորդակցությունը փաստաբանների և դատավարության մյուս մասնակիցների հետ,
- հաղորդակցությունը անչափահասների հետ (ինչպես հարցեր տալ, ինչպես ստանալ արժանահավատ տեղեկություններ),
- հաղորդակցությունը փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ,
- միջմշակութային հաղորդակցություն:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

49. J-Q-081-20. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է երեխաների նկատմամբ բռնությունների դեմ պայքարում, այդ բռնությունների որակման, դրանց առնչությամբ վարույթի և քննության վերաբերյալ գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ՀՀ դատախազաքննչական և դատական պրակտիկայում առկա խնդիրները վերհանելու, ինչպես նաև իրավական նոր դիրքորոշումները ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկումները տեղի կունենան, մասնավորապես, հետևյալ ասպեկտներով՝

- երեխաների նկատմամբ բռնության հասկացությունը, տեսակները, հանցավոր դրսևորումների քրեական բնութագիրը,
- երեխաների նկատմամբ բռնության հոգեբանական հետևանքները և հակազդման առանձնահատկությունները,
- երեխաների նկատմամբ բռնության դեպքերի քննության առանձնահատկությունները քննության սկզբնական և հետագա փուլերում (քննության մեթոդիկան ու տակտիկան),
- քրեական դատավարությունում բռնության ենթարկված երեխաների իրավունքների ապահովումը,
- օրինական ներկայացուցչի, մանկավարժի և մասնագետի (հոգեբանի) մասնակցությունը քրեական գործով վարույթին՝ որպես երեխայի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիք,
- երեխայի իրավունքների ապահովման առանձնահատկությունները դատական քննության փուլում,
- բռնության ենթարկված երեխաների հարցաքննության առանձնահատկությունները
- երեխայի նկատմամբ բռնության դեպքերի քննության ընթացքում միջոլորտային և միջգերատեսչական համագործակցությունն ու դրա ձևերը:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

50. J-Q-082-20. Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում

Դասընթացն անհրաժեշտ է ցանկացած տեսակի, այդ թվում՝ համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության ընթացքում էլեկտրոնային ապացույցների հավաքման, ստուգման, գնահատման ու կիրառման համալիր հարցերի կապակցությամբ գիտելիքներ հաղորդելու և ապացուցման գործընթացում դրանց տակտիկապես գրագետ կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է «Կիբեռհանցագործությունների մասին» ԵԽ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների վերաբերյալ նորմերի իմպլեմենտացիայի

խնդիրները ՀՀ քրեական օրենսգրքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացուցման գործընթացի հիմնախնդիրները, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու քրեադատավարական առանձնահատկությունները, խնդրո առարկայի վերաբերյալ ՄԻԵԴ-ի, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև այս ոլորտում միջազգային փոխօգնության հիմնախնդիրները:

51. J-G-017-20. Փաստարկում և հռետորաբանություն

Դասընթացը պայմանավորված է ապացուցման, հերքման, հիմնավորման, զրուցակիցների մոտ համոզմունքի ձևավորման, տպավորիչ ելույթի ու արդյունավետ բանավեճի տեխնոլոգիաների տիրապետման, դրանց ճիշտ կիրառման գործնական հմտությունների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- փաստարկման գործընթացի բաղադրիչները,
- փաստարկման գործընթացի եղանակները,
- փաստարկման համակարգին ներկայացվող պահանջները,
- ավանդական և ժամանակակից հռետորիկայի զինանոցը,
- առավել հաճախ հանդիպող սխալները,
- բանավեճի ընթացքում կիրառվող կառուցողական և ապակառուցողական տեխնոլոգիաները և վերջիններիս չեզոքացման մեթոդաբանական սկզբունքները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

52. J-G-021-20. Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն

Դասընթացն անհրաժեշտ է կառավարման և առաջնորդության, ինչպես նաև հոգեբանական ազդեցության, դրա տեսակների, մեթոդների, մեխանիզմների և տարաբնույթ դրսևորումների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների զարգացման համար:

Դասընթացը ներառում է՝

- կառավարչական հմտություններն ու առաջնորդման ոճերը,
- արդյունավետ պլանավորումը,
- թիմի ձևավորումը և թիմային աշխատանքի կազմակերպումը,
- ներազդման հոգեբանության հիմնական հասկացությունները, ներազդման տեսակները, մեթոդներն ու մեխանիզմները,
- կառուցողական (համոզում, ներշնչում և այլն) և ոչ կառուցողական (մանիպուլյացիա և այլն) ներազդման մեթոդների առանձնահատկությունները,
- կառուցողական և ոչ կառուցողական ներազդմանը դիմակայելու եղանակները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

53. J-J-027-20. Փախստականների իրավունքների պաշտպանության արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է «Փախստականների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառման, փախստականի կարգավիճակ և ապաստան հայցող անձանց, փախստականների իրավունքների պաշտպանության ոլորտում գիտելիքների ծավալի ու դրանց կիրառման գործնական հմտությունների ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- «Փախստականների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և այլ միջազգային փաստաթղթերով նախատեսված փախստականների կարգավիճակի վերաբերյալ նորմերի՝ ՀՀ օրենսդրությունում իմպլեմենտացման («Փախստականների և ապաստանի մասին», «Օտարերկրացիների մասին», «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքներում և այլ իրավական ակտերում) և գործնականում դրանց կիրառման հիմնախնդիրները,
- փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ շրջանակների (ՀՀ ոստիկանության ծառայության, ՀՀ ազգային անվտանգու-

թյան ծառայության, ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայության, ՄԱԿ-ի փախստականների գործերով հանձնակատարի գրասենյակի գործունեության), ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի (հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ-երի) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ գործնականում հանդիպող խնդիրները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

54. J-J-028-20. Անչափահասների իրավունքների պաշտպանությունը քրեական վարույթի ընթացքում

Դասընթացը պայմանավորված է անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ քրեաիրավական մասնագիտացում ունեցող դատավորների գիտելիքների ծավալի ընդլայնման և գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Այն ներառում է միջազգայնորեն ճանաչված՝ անչափահասի լավագույն շահի սկզբունքի բովանդակության բացահայտումը և դրանով պայմանավորված՝

- միջազգային պայամանագրերի, ներպետական օրենսդրության և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներն ու պրակտիկայում կիրառման առանձնահատկությունները,
- անչափահասների նկատմամբ քրեաիրավական և քրեադատավարական առանձին ինստիտուտների կիրառման և նրանց մասնակցությամբ քրեական վարույթի առանձնահատկությունները (մասնավորապես, կներկայացվեն՝ անչափահաս կասկածյալների, մեղադրյալների նկատմամբ խափանման միջոցների կիրառման, այդ թվում՝ ազատությունից զրկելու հետ կապված, նրանց պաշտպանության, հակընդդեմ հարցման իրավունքի, ինչպես նաև Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայով և ՀՀ քր. դատ. օրենսգրքով երաշխավորված այլ իրավունքների ապահովման և իրականացման հիմնահարցերը),
- անչափահասների նկատմամբ իրականացվող պատժողական քաղաքականության, այդ թվում՝ պատիժների կատարման հիմնահարցերը: Մասնավորապես կներկայացվեն՝ անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժների համակարգի, պատիժների նշանակման և կատարման առանձնահատկությունները, այդ թվում՝ պրոբացիայի ինստիտուտի ներդրման պայմաններում,
- անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ քրեական վարույթների առանձնահատկությունները և այլ հարցեր, մասնավորապես՝ անչափահաս տուժողների և վկաների պաշտպանությունը՝ միջազգային պայմանագրերի և ՀՀ օրենսդրության համաձայն, սոցիալական աշխատողների և այլ մասնագետների դերակատարությունը՝ իրավախախտում կատարած, հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա անչափահասների վերականգնման գործում:

Դաստնթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

55. J-Q-079-20. Փախստականների իրավունքներ

Դասընթացը նպատակ ունի ունկնդիրներին ապահովել փախստականների իրավունքի ոլորտում բազմակողմանի գիտելիքներով և տեղեկություններով (հատկապես կենտրոնանալով քրեական և քրեադատավարական ոլորտներում առկա հիմնահարցերի վրա), որոնց կիրառումն անհրաժեշտ է խնդրո առարկա հարցի տիրույթում արդարադատությունն արդյունավետ իրականացնելու համար:

Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ունկնդիրը՝

- կունենա գիտելիքներ փախստականների միջազգային իրավունքի զարգացման, դրա հիմնական աղբյուրների, ինչպես նաև փախստականների ու ապաստան հայցողների իրավական պաշտպանության հիմնական սկզբունքների ու երաշխիքների քրեաիրավական ու քրեադատավարական ասպեկտների վերաբերյալ,
- ձեռք կբերի գիտելիքներ փախստականի կարգավիճակ շնորհելու, այն մերժելու և այդ կարգավիճակը դադարեցնելու հիմքերի ու չափանիշների, ինչպես նաև դրանց կիրառման հետ կապված ապացուցման հիմնախնդիրների մասին,

- կկարողանա հստակ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բացառությունն այն անձանց նկատմամբ, ովքեր օգտվում են 1951թ. Կոնվենցիայի 31-րդ հոդվածով սահմանված երաշխիքից,
- կկարողանա հստակ կիրառել 1951թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածով սահմանված և մարդու իրավունքի ոլորտի ՀՀ միջազգային պայմանագրերից բխող չվերադարձելիության սկզբունքը և դրանից սահմանված բացառությունները, այդ թվում՝ Եվրոպական դատարանի վերաբերելի որոշումների լույսի ներքո,
- կիմանա քրեական գործով վարույթի շրջանակներում փախստականների իրավունքների պաշտպանության քրեադատավարական երաշխիքների մասին,
- կկարողանա ձեռք բերած գիտելիքներն կիրառել (ըստ անհրաժեշտության) իր աշխատանքային գործունեության ընթացքում, մասնավորապես՝ փաստականների հետ կապված տարբեր խնդիրների լուծման գործում:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

IV. ՓԱԹԵԹՆԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-J-005-20	Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում	10
2.	J-J-014-20	Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր	8
3.	J-J-073-20	Ներքին ուսումնասիրություններ (քննություն)	6
4.	J-J-021-20	Դատական ակտերի մշակման հմտություններ	8
5.	J-030-20	Դատական իշխանության անկախություն և թափանցիկություն	8

Փաթեթ 2.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-J-005-20	Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում	10
2.	J-J-014-20	Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր	8
3.	J-J-017-20	Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր	10
4.	J-J-020-20	ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները	4
5.	J-J-031-20	Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար	8

2. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-S-001-20	Սնանկության վարույթի արդի հարցեր	8
2.	J-S-002-20	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	10
3.	J-S-003-20	Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր	6
4.	J-S-004-20	Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր	6
5.	J-S-005-20	Բանկային իրավունքի արդի հարցեր	6
6.	J-S-006-20	Ֆինանսական կառավարում	4

3. ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-C-001-20	Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր	6
2.	J-C-022-20	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	10
3.	J-C-003-20	Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր	6
4.	J-C-028-20	ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քաղաքացիական գործերով	8
5.	J-C-029-20	ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հարցեր	10

Փաթեթ 2.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-C-003-20	Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր	6
2.	J-C-022-20	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	10
3.	J-C-028-20	ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քաղաքացիական գործերով	8
4.	J-C-032-20	Հատուկ հայցային վարույթներով և հատուկ վարույթներով գործերով քննության առանձնահատկությունները	8
5.	J-C-033-20	Հաշտարարության ինստիտուտի հիմնախնդիրներ	8

Փաթեթ 3.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-C-015-20	Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	4
2.	J-C-022-20	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	10
3.	J-C-023-20	Ոչ նյութական վնասի հատուցման հիմնախնդիրներ	10
4.	J-C-028-20	ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քաղաքացիական գործերով	8
5.	J-C-032-20	Հատուկ հայցային վարույթներով և հատուկ վարույթներով գործերով քննության առանձնահատկությունները	8

Փաթեթ 4.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-C-008-20	Աշխատանքային իրավունքի արդի հարցեր	10
2.	J-C-022-20	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	10
3.	J-C-028-20	ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քաղաքացիական գործերով	8
4.	J-C-031-20	Իրավական օգնություն, օտարերկրյա դատական ակտերի և արբիտրաժի վճիռների ճանաչման ու հարկադիր կատարման վերաբերյալ դիմումներով գործերի վարույթ	4
5.	J-C-032-20	Հատուկ հայցային վարույթի և հատուկ վարույթի կարգով գործերի քննության առանձնահատկությունները	8

4. ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-A-001-20	ՀՀ վարչական վարույթի արդի հարցեր	12
2.	J-A-008-20	ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր	12
3.	J-A-015-20	Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	10
4.	J-A-016-20	ՀՀ էկոլոգիական իրավունքի արդի հարցեր	6

Փաթեթ 2.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-A-014-20	ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները վարչական գործերով	12
2.	J-A-003-20	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության արդի հարցեր	10
3.	J-A-013-20	Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը	8
4.	J-A-010-20	Հատուկ վարույթի գործերով քննության առանձնահատկությունները	10

1. ՔՐԵԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-Q-022-20	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	6
2.	J-Q-024-20	Պատիժ նշանակելու, կատարելու, պատժից ազատելու կամ այն փոխարինելու նյութահիրավական և դատավարական հիմնախնդիրներ	6
3.	J-Q-079-20	Զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում	8
4.	J-Q-071-20	Կոռուպցիոն դեպքերի քննությունը	6
5.	J-Q-077-20	Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը	8
6.	J-Q-056-20	Խոշտանգումների քրեահիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները	6

Փաթեթ 2.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-Q-001-20	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	6
2.	J-Q-081-20	Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները	8
3.	J-Q-072-20	Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննությունը	8
4.	J-Q-082-20	Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	6
5.	J-Q-074-20	Կալանք և այլ խափանման միջոցներ	6
6.	J-Q-075-20	Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը	6

Փաթեթ 3.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-Q-035-20	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	8
2.	J-Q-080-20	Հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը	8
3.	J-Q-054-20	Իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրները քրեական գործերով	6
4.	J-Q-082-20	Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	6
5.	J-Q-076-20	Անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը	6
6.	J-Q-078-20	Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը	6

Նախագահող՝ ***Ե. Խունդկարյան***

Հավելված 2
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2019 թվականի
նոյեմբերի 29-ի թիվ ԿԽ-010/19/1 որոշման

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատավորների 2020թ. հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:
3. Ծրագիրը նպատակաուղղված է դատավորների մոտ հրազենի գործադրման հմտությունների ձևավորմանը և դրանց շարունակական կատարելագործմանը:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:
5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 6 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ օր ժամկետով:
6. Հատուկ ուսուցման ժամանակացույց է սահմանվում 2020 թվականի սեպտեմբեր ամիսը:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-S-001-20	Հրազենի գործադրման հմտություններ	6

1. J-S-001-20. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատավորների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հրազեն գործադրելու, պահելու, տեղափոխելու անվտանգության կանոնները, հրազենային վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնության հիմունքները, ինչպես նաև հրազենի կիրառման գործնական պարապմունքները:

Նախագահող՝ ***Ե. Խունդկարյան***

Հավելված 3
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2019 թվականի
նոյեմբերի 29-ի թիվ ԿԽ-010/19/1 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատական ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) 2020 թվականի վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա: Ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել նաև Բարձրագույն դատական խորհրդի 23.08.2018թ. ԲԴԽ-34-Ո-85 որոշումը:
3. Ծրագիրը նպատակաուղղված է Ծառայողի մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը հետևյալ ոլորտներում՝ քաղաքացիական, քրեական և վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումներ, դատական ծառայություն, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարություններ, դատական ակտի մշակման հմտություններ, հաշտարարության ինստիտուտի հիմնախնդիրներ, տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտ, դատական ծառայողի վարքագծի կանոններ, կառավարման հմտություններ, հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ Ծրագրում նշված խմբերի համար նախատեսված դասընթացների մոդուլների հիման վրա:
5. Վերապատրաստման ժամաքանակը իրավաբանական մասնագիտական գործառույթներ իրականացնող դատական ծառայողների համար սահմանվում է 30, ղեկավար պաշտոն զբաղեցնող դատական ծառայողների համար՝ 26, ծրագրի 5-րդ կետում նշված մասնագիտական գործառույթ իրականացնող դատական ծառայողների համար՝ 26, 6-րդ և 8-րդ կետերում նշված մասնագիտական գործառույթ իրականացնող դատական ծառայողների համար՝ 16, դատական նիստերի քարտուղարների համար՝ 16, իսկ Դատական դեպարտամենտում այլ դատական ծառայողների համար՝ 24 ակադեմիական ժամ:
6. Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումն ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ: Գնահատումն իրականացվում է տվյալ խմբի դասընթացներին հաջորդող առաջին օրը՝ բանավոր եղանակով, միասնական քննությամբ:
7. Վերապատրաստման ժամանակացույց է սահմանվում 2020 թվականի փետրվար-մայիս ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Քրեական գործեր քննող դատավորների օգնականների, ավագ օգնականների և քրեաիրավական ոլորտում մասնագիտացած դատական այլ ծառայողների վերապատրաստման դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	JS-Q-001-20	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	4
2.	JS-Q-022-20	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	14
3.	JS-Q-035-20	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	6
4.	JS-Q-012-20	Դատական ակտի մշակման հմտություններ	6

2. Քաղաքացիական գործեր քննող դատավորների օգնականների, ավագ օգնականների և քաղաքացիաիրավական ոլորտում մասնագիտացած դատական այլ ծառայողների վերապատրաստման դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
5.	JS-C-011-20	Դատական ակտի մշակման հմտություններ	6
6.	JS-C-012-20	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	8
7.	JS-C-015-20	Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	8
8.	JS-C-033-20	Հաշտարարության ինստիտուտի հիմնախնդիրներ	8

3. Վարչական գործեր քննող դատավորների օգնականների, ավագ օգնականների և վարչաիրավական ոլորտում մասնագիտացած դատական այլ ծառայողների վերապատրաստման դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
9.	JS-A-001-20	Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	8
10.	JS-A-008-20	ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր	8
11.	JS-A-018-20	Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի արդի հարցեր	8
12.	JS-A-019-20	Դատական ակտի մշակման հմտություններ	6

4. Ղեկավար պաշտոններ զբաղեցնող դատական ծառայողների վերապատրաստման դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
13.	JS-J-011-20	Դատական ծառայության հիմնահարցեր և դատական ծառայողի վարքագծի կանոններ	6
14.	JS-C-008-20	ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցեր	10
15.	JS-G-019-20	Կառավարման հմտություններ	10

5. Գրասենյակի պետերի վերապատրաստման դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
16.	JS-J-011-20	Դատական ծառայության հիմնահարցեր և դատական ծառայողի վարքագծի կանոններ	6
17.	JS-G-011-20	Դատական գործավարություն և վիճակագրություն	10
18.	JS-G-019-20	Կառավարման հմտություններ	10

6. Գրասենյակի մասնագետների, ինչպես նաև գործավարների վերապատրաստման դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
19.	JS-G-011-20	Դատական գործավարություն և վիճակագրություն	8
20.	JS-G-025-20	Համակարգչային հմտությունների կատարելագործում	8

7. Դատական նիստերի քարտուղարների վերապատրաստման դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
21.	JS-J-011-20	Դատական ծառայության հիմնահարցեր և դատական ծառայողի վարքագծի կանոններ	10
22.	JS-G-020-20	Ֆեմիդա համակարգչային ծրագիր	6

8. ՀՀ դատարանների աշխատակազմի արխիվապահների վերապատրաստման դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
23.	JS-J-011-20	Դատական ծառայության հիմնահարցեր և դատական ծառայողի վարքագծի կանոններ	6
24.	JS-G-013-20	Արխիվային գործի հիմնահարցեր	10

9. Դատական դեպարտամենտում այլ դատական ծառայողների վերապատրաստման դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
25.	JS-J-011-20	Դատական ծառայության հիմնահարցեր և դատական ծառայողի վարքագծի կանոններ	10
26.	JS-J-014-20	Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր	6

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. JS-Q-001-20. Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ ունկընդիրների գիտելիքները, դրանց կիրառման գործնական հմտությունները զարգացնելու, կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի, 5-7-րդ, 10-րդ, 13-րդ հոդվածների վերաբերյալ ՄԻԵԴ որոշումները, այդ թվում՝

- խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրները,
- անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը,
- մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը,
- արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքը:

Դասընթացը, մասնավորապես, ներառում է վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ ՄԻԵԴ վերջին տարիների իրավական դիրքորոշումները:

2. JS-Q-022-20. ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները մատուցելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ՀՀ քրեական դատավարության ոլորտում նոր օրենսդրությունը,
- ՀՀ քրեական դատավարության առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,
- ապացույցների գնահատման մեթոդներն ու գործերը վերլուծելու կարողությունները,
- քրեական գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կալանավորման հարցի քննարկման ընթացակարգը և առանձնահատկությունները,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության, Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները,
- զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում (զրեական դատավարության զոհի իրավական կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները, զոհերի համար ընթացակարգային երաշխիքները, զոհերի պաշտպանությունը և նրանց աջակցության տրամադրումը (երկրորդային վիկտիմիզացման կանխարգելում, պաշտպանություն ապաբեկումից, վրեժխնդրությունից զոհերի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի ապահովումը, զոհերին փոխհատուցումը և այլն),

– այլ խափանման միջոցներ կիրառման գործնական հմտությունները:

3. JS-Q-035-20. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումները, ինչպես նաև քրեական իրավունքի ոլորտում նոր իրավական դիրքորոշումներն ունկնդիրներին մատուցելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

– քրեական նոր օրենսգրքի նախագծով նախատեսված, ինչպես նաև ընթացիկ փուլում առաջացող այլ հիմնախնդիրների լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձի ներկայացումը, դրանց զարգացման միտումները և հեռանկարները,
– ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, ինչպես նաև դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը),
– հանցավոր արարքների ճշգրիտ որակման հիմնահարցերը (այդ թվում՝ թրաֆիքինգի կամ շահագործման որակում, թրաֆիքինգի կամ շահագործման վերհանման հիմնախնդիրներ, աշխատանքային թրաֆիքինգ և սեռական շահագործում, ընտանեկան բռնություններ, աշխատանքային հարաբերություններ, սոցիալական ծանր վիճակում գտնվող ընտանիքներ, մարմնավաճառությամբ զբաղվող անձինք, այդ թվում՝ երեխաներ, մուրացկան երեխաներ, հատուկ հաստատություններում սովորող երեխաներ) և դրանց լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձը,
– համաչափ, կանխարգելիչ և արդյունավետ պատիժ նշանակելու հարցերը:

4. JS-Q-012-20. Դատական ակտերի մշակման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատական ակտերի կազման և համոզիչ իրավական վերլուծությունների կատարման, իրավամեկնաբանողական հնարքների կիրառման ոլորտներում կարողությունների և գործնական հմտությունների ձևավորման, կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

– դատական փաստաթղթերի ձևակերպման մեթոդները,
– արտահայտման հստակ ոճի ապահովումը, որը հասկանալի է նշված փաստաթղթերն ընթերցողների համար,
– գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն դատական ակտի ձևակերպման ընթացքում (փաստեր և հարցեր, լսարան, հրապարակում),
– նյութերի վերանայման մեթոդները,
– իրավամեկնաբանման հնարքներ,
– տարատեսակ դատական փաստաթղթերի ձևակերպումը, ուշադրության սևեռումը կառուցվածքային տարբերություններին (ներածություն, հարցերի ներկայացում, փաստերի ներկայացում, իրավական սկզբունքների քննարկում, վերանայման չափանիշ, քննարկվող հարցերի հերթականություն, հարցեր, որոնց պետք է անդրադառնալ, գործերի հիշատակում (ներառյալ ՄԻԵԴ-ի վճիռները), մեջբերումներ, խուսափում շահերի պաշտպանությունից),

- դատական ձևակերպումներում հնարավոր խնդիրները (բառերով ծանրաբեռնվածություն, հստակության և պարզության պակաս, վատ կազմակերպում, թաքնված վերլուծություն, պերճություն և հումոր),
- լավ ձևակերպման ուղեցույցները,
- համատեղ վճիռների, տարբերվող կարծիքների ձևակերպման մեթոդներ:

5. JS-C-011-20. Դատական ակտերի մշակման հմտություններ

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 4-րդ կետի ներքո:

6. JS-C-012-20. ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և դրանց կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներդրված նոր ինստիտուտները և իրավակարգավորումները ներկայացնելու համար:

Դասընթացը ներառում է՝

- քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու հիմնահարցերը,
- ապացուցման հիմնահարցերը, ապացուցման բեռի բաշխման կանոնները և ապացույցների գնահատման հմտությունները,
- դատաքննության հիմնահարցերը,
- դատավարական ժամկետներն ու դրանց կառավարման մեթոդները,
- պետական տուրքի և դատական ծախսերի (ներառյալ այլ ծախսերի) հաշվարկման ու գանձման առանձնահատկությունները,
- հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման և նախնական ապահովման կիրառման առանձնահատկությունները,
- հակընդդեմ հայցը և դրա չներկայացման դատավարական հետևանքները,
- պարզեցված ընթացակարգով գործերի քննության առանձնահատկությունները,
- հատուկ հայցային վարույթների և հատուկ վարույթների առանձնահատկությունները,
- դատավարության վարման, դատաքննության անցկացման տակտիկայի և տեխնիկայի որոշ հարցեր, դատավարության նորմերի կիրառման հետ կապված այլ հիմնահարցեր,
- քաղաքացիական գործերով ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների կիրառման արդի հարցեր,
- սնանկության վարույթի արդի հարցեր, (այդ թվում՝ սնանկ ճանաչված անձի և պարտատերերի իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը),
- պարտավորական հարաբերությունների արդի հիմնահարցեր,
- ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցեր, (այդ թվում՝ աշխատանքային պայմանագրերի տեսակների, լուծման, լուծման կարգի առանձնահատկություններ):

7. JS-C-015-20. Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ ունկընդիրների գիտելիքները, դրանց կիրառման գործնական հմտությունները զարգացնելու, կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է քաղաքացիական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, ներառյալ Եվրոպական կոնվեցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և դրա կիրառման հարցերը, այդ թվում՝

- արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը,
- դատարանի իրավունքը,
- օրենքի հիման վրա ստեղծված անկախ տրիբունալի էությունը,
- անկողմնակալ տրիբունալի էությունը,
- ՄԻԵԿ 6-րդ հոդվածի վարույթային տարրերը՝ արդարացի լսումները, մրցակցության սկզբունքը, «Զենքերի» հավասարությունը, հրապարակային քննության, ողջամիտ ժամկետի սկզբունքը:

Դասընթացը, մասնավորապես, ներառում է վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ ՄԻԵԴ վերջին տարիների իրավական դիրքորոշումները:

8. JS-C-033-20. Հաշտարարության ինստիտուտի հիմնախնդիրներ

Դասընթացն անհրաժեշտ է հաշտարարության ինստիտուտի ոլորտում առկա հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝
- հաշտարարության ինստիտուտի ընդհանուր բնութագիրը,
- հաշտարարության վերաբերյալ համաձայնությունն ու կիրառման առանձնահատկությունները,
- հաշտարարություն և հաշտարարի նշանակումը, հաշտարարության հետ կապված ծախսերը,
- հաշտարարության շրջանակը, ժամկետները և ավարտը,
- արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը և այլ հիմնահարցեր:

9. JS-A-001-20. Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ ունկընդիրների գիտելիքները, դրանց կիրառման գործնական հմտությունները զարգացնելու, կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է վարչական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, ներառյալ Եվրոպական կոնվեցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումներն ու դրանց կիրառման հարցերը, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը, օրենքի հիման վրա ստեղծված անկախ տրիբունալի էությունը, ՄԻԵԿ 6-րդ հոդվածի վարույթային տարրերը՝ արդարացի լսումները, մրցակցության սկզբունքը, հրապարակային քննության, ողջամիտ ժամկետի սկզբունքը:

Դասընթացը մասնավորապես ներառում է վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ վերջին տարիների ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները:

10. JS-A-008-20. ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝
- վարչական դատավարության սկզբունքների կիրառման առանձնահատկությունները,

- գործը դատաքննության նախապատրաստման և դատաքննության փուլերում առաջացող հիմնահարցերը,
- ապացուցման բեռի բաշխման առանձնահատկությունները,
- հայցի ապահովում կիրառելու հիմնախնդիրները,
- հայցատեսակների տարբերակման հիմնախնդիրները,
- դատաքննության տեսակները վարչական դատավարությունում,
- հատուկ վարույթի գործերի քննության ընթացքում ծագող հիմնահարցերը,
- վերաքննիչ և վճռաբեկ վարույթների ընթացքում ծագող հիմնահարցերը
- հարկային և մաքսային վեճերի քննության առանձնահատկությունները,
- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթի արդի հարցերը,
- տրանսպորտային միջոցների շահագործումից ծագող վեճերի քննության առանձնահատկությունները,
- վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կիրառման արդի հարցերը:

11. JS-A-018-20. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի օրենսդրական կարգավորումը, տնտեսական մրցակցության հասկացությունն ու մրցակցության եղանակները, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերի կապակցությամբ դատարան դիմելու կարգն ու վարույթի առանձնահատկությունները, վեճերի քննության ընթացքում ծագող այլ հարցեր:

12. JS-A-019-20. Դատական ակտի մշակման հմտություններ

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 4-րդ կետի ներքո:

13. JS-J-011-20. Դատական ծառայության հիմնահարցեր և դատական ծառայողի վարքագծի կանոններ

Դասընթացն անհրաժեշտ է դատական ծառայության հարցերի և դատական ծառայողի վարքագծի կանոնների նոր իրավակարգավորումներով սահմանված չափանիշների ներկայացման, այս ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման և կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝
- դատական ծառայության նորմատիվ իրավական կարգավորումը,
- դատական ծառայողի վարքագծի կանոնները ինչպես ծառայողական, այնպես էլ արտածառայողական հարաբերություններում,
- դատական ծառայողների վարքագծի կանոնների առանձնահատկությունները,
- կադրային քաղաքականության առանձնահատկությունները,
- դատական ծառայության համակարգում վարչարարությունը:

14. JS-C-008-20. ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է աշխատանքային իրավունքում առկա հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝
- աշխատանքային իրավահարաբերությունների ծագման և դադարման հիմնահարցերը,
- աշխատանքային իրավահարաբերությունների կողմերի իրավունքների պաշտպանության և պատասխանատվության հիմնահարցերը,

- աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության և վերահսկողության հարցերը,
- աշխատանքային պայմանագրերի տեսակները,
- աշխատանքային պայմանագրերի լուծման, լուծման կարգի առանձնահատկությունները,
- հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման առանձնահատկություններն աշխատանքային հարաբերություններում:

15. JS-G-019-20. Կառավարման հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է կառավարման և առաջնորդության վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների զարգացման համար:

Դասընթացը ներառում է՝

- կառավարչական հմտություններն ու առաջնորդման ոճերը,
- արդյունավետ պլանավորումը,
- թիմի ձևավորումը և թիմային աշխատանքի կազմակերպումը:

16. JS-J-011-20. Դատական ծառայության հիմնահարցեր և դատական ծառայողի վարքագծի կանոններ

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 13-րդ կետի ներքո:

17. JS-G-011-20. Դատական գործավարություն և վիճակագրություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական գործավարության և վիճակագրության հիմնադրույթների և ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է՝

- դատական գործավարության հիմնական գործառույթները և փաստաթղթաշրջանառության հիմունքները,
- դատական վիճակագրության իրականացումը, վիճակագրական տվյալների ստացման հմտությունները,
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման գործնական հարցերը:

18. JS-G-019-20. Կառավարման հմտություններ

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 15-րդ կետի ներքո:

19. JS-G-011-20. Դատական գործավարություն և վիճակագրություն

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 17-րդ կետի ներքո:

20. JS-G-025-20. Համակարգչային հմտությունների կատարելագործում

Դասընթացը պայմանավորված է համակարգչային ծրագրերով աշխատելու, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և իրավական-տեղեկատվական-որոնողական համակարգերից օգտվելու գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև այդ գիտելիքների ընդլայնման շարունակական զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է «Microsoft Office Word» և «Microsoft Office Excel» ծրագրերից առավել արդյունավետ օգտվելու կարողությունները, ինչպես նաև իրավական-տեղեկատվական-որոնողական՝ «http://www.arlis.am/», «http://datalex.am/», «https://www.e-draft.am/», «https://hudoc.echr.coe.int/» և այլ համացանցային ռեսուրսներից օգտվելու ունակություններն ու համակարգչից օգտվելու այլ հմտություններ:

21. JS-J-011-20. Դատական ծառայության հիմնահարցեր և դատական ծառայողի վարքագծի կանոններ

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 13-րդ կետի ներքո:

22. JS-G-020-20. Ֆեմիդա համակարգչային ծրագիր

Դասընթացն անհրաժեշտ է դատական նիստերի համակարգչային արձանագրման հմտությունների զարգացման համար:

Դասընթացը ներառում է Ֆեմիդա համակարգչային ծրագրի նկարագիրը, աշխատանքի առանձնահատկությունները, համապատասխան գործիքների կիրառման հմտությունները:

23. JS-J-011-20. Դատական ծառայության հիմնահարցեր և դատական ծառայողի վարքագծի կանոններ

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 13-րդ կետի ներքո:

24. JS-G-013-20 Արխիվային գործի հիմնահարցեր

Դասընթացը պայմանավորված է արխիվային գործի ոլորտում իրավական կարգավորումներն ունկնդիրներին մատուցելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- արխիվային գործի մասին օրենսդրությունը,
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերաբերելի կարգավորումները,
- արխիվային գործի կազմակերպումը,
- արխիվային նյութերի պահպանման ժամկետները:

25. JS-J-011-20. Դատական ծառայության հիմնահարցեր և դատական ծառայողի վարքագծի կանոններ

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 13-րդ կետի ներքո

26. JS-J-014-20. Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն երևույթների, դրա դեմ տարվող պայքարի ընդհանուր իրավիճակի, հակակոռուպցիոն պայքարի իրավական (ներպետական և միջազգային, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և ԵՄ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) հանձնարարականները), և ինստիտուցիոնալ շրջանակների (ներպետական և միջազգային, այդ թվում՝ ԳՐԵԿՈ-ի և ՄԱՆԻՎԱԼ-ի գործունեությունը), համապատասխան այլ շահագրգիռ կողմերի (հասարարական կազմակերպությունների, ՁԼՄ-երի) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը:

Նախագահող՝ ***Ե. Խունդկարյան***

Հավելված 4
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2019 թվականի
նոյեմբերի 29-ի թիվ ԿԽ-010/19/1 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ Ծ Ր Ա Գ Ի Ր

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատական կարգադրիչների 2020 թ. վերապատրաստման և հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա: Ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել նաև Բարձրագույն դատական խորհրդի 23.08.2018թ. ԲԴԽ-34-Ո-85 որոշումը:
3. Ծրագիրը նպատակաուղղված է վարքաբանության, առաջին բուժական և հոգեբանական օգնության, ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման հմտությունների վերաբերյալ դատական կարգադրիչների գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը:
4. Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումն ու հատուկ ուսուցումն ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ: Գնահատումն իրականացվում է տվյալ խմբի դասընթացներին հաջորդող առաջին օրը:
5. Վերապատրաստման և հատուկ ուսուցման ժամանակացույց է սահմանվում 2020 թվականի մայիս-օգոստոս ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

№	Դասիչը	Անվանումը	Ժ/ք
1.	B-G-015-20	Դատական կարգադրիչների վարքաբանություն	12
2.	B-G-016-20	Առաջին բուժական և հոգեբանական օգնություն	12
3.	B-S-001-20	Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման հմտություններ	6

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. B-G-015-20. Դատական կարգադրիչների վարքաբանություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների կողմից պատշաճ վարքագծի դրսևորումն ապահովելու համար:

Դասընթացը ներառում է դատական կարգադրիչների ծառայողական վարքագծի կանոնները, էթիկայի ծագման և սահմանման հիմնահարցերը, քաղաքացիների հետ նրանց շփումների վարքաբանության հիմունքները և այլ հարցեր:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ B-G-016-20 դասընթացի հետ միասնական քննությամբ:

2. B-G-016-20. Առաջին բուժական և հոգեբանական օգնություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական մարմինների հետ շփվող քաղաքացիների հոգեբանական և առողջական ռիսկերը նվազեցնելու համար՝ դատական կարգադրիչներին օգնելով առավել արդյունավետ իրականացնել պաշտոնական գործառույթները: Դասընթացը պայմանավորված է նաև դատական կարգադրիչների՝ դատարաններում արտակարգ կամ ճգնաժամային իրավիճակ առաջանալու դեպքում ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է անհատական և խմբային գործընթացների հոգեբանական բնութագրությունը, սթրեսի հիմքերը և տեսակները, դրա կառավարման մեթոդները, առաջին բուժօգնության հիմունքները, միջոցների և մեթոդների բնութագիրը:

Դասընթացը ներառում է նաև միջանձնային հարաբերությունների հոգեբանական ասպեկտները, ինքնակառավարման վերահսկողության առանձնահատկությունները և ներազդման հոգեբանությունը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ B-G-015-20 դասընթացի հետ միասնական քննությամբ:

3. B-S-001-20. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների մոտ հատուկ միջոցների գործադրման հմտությունների, ֆիզիկական ուժի և հրազենի կիրառման անհրաժեշտության, կիրառման պայմանների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման համար:

Գնահատումն իրականացվում է հմտությունների գործնական ստուգման եղանակով:

Նախագահող՝ ***Ե. Խունդկարյան***